ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հունվարի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08»» ծածկագրով պայմանագրում 2020 թվականի փետրվարի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Հիմք ընդունելով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի (մտից Մ-1298) գրությունը,
Փոփոխության նկարագրություն՝	Հիմք ընդունելով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի (մտից Մ-1298) գրությունը, «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08» ծածկագրով պայմանագրում կատարվել է փոփոխություն և լրացում.
Փոփոխության հիմնավորում՝	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի (մտից Մ-1298) գրություն: Պայմանագրի 7.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №2

«20» հունվարի 2020թ. N ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08 պայմանագրի

ք.Երևան «21» «02» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի (մտից Մ-1298) գրությունը, ինչպես նաև կողմերի միջև 2020 թվականի հունվարի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2020 թվականի հունվարի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/08» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1.1.1. Պայմանագրի 4.1 կետից «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանել:

1.1.2. Պայմանագիրը լրացնել նոր 4.2.1 կետով. «4.2.1. Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց հաշվարկների համար 4.2 կետի բանաձևում ՄԳ/ՆԳ-ի համար գործում են հետևյալ գործակիցները՝
1-ին չափաբաժին՝ 0.3547,
2-րդ չափաբաժին՝ 0.3656,
3-րդ չափաբաժին՝ 0.3694,
4-րդ չափաբաժին՝ 0.3611:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08417829
Շրջակա միջավայրի նախարարության	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի
գլխավոր քարտուղարի ժ/պ	տնօրեն
Վ.Ջիլավյան	***Վ.Բաղդասարյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**